ՀՏԴ 330.1(479.25+479.243) Տնտեսագիտություն

ՀՀ և ԼՂՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Շուշանիկ ԱՍՐՅԱՆ

Բանալի բառեր- տնտեսական աճ, տնտեսական զարգացում, տնտեսական զարգացման ներդաշնակեցում, տնտեսական աճի որակ, տնտեսական աճ-մրցունակություն, տնտեսության կառուցվածք, զբաղվածության կառուցվածք, <<գիտելիքահենք>> տնտեսություն:

Keywords: economic growth, economic development, harmonization of economic development, quality of economic growth, economic growth- competitiveness, economic structure, employment structure, 'knowledge-based' economy.

Ключевые слова: экономический рост, экономическое развитие, гармонизация экономического развития, качество экономического роста, экономический рост - конкурентность, структура экономики, структура занятости, научно-основанная экономика:

Sh.Asryan

Iissues of the Harmonious Development of the Economies of RA and NKR

When the world political complicated situation and unstable global economic developments pose new challenges for the two Armenian economies, the successes and shortcomings of the latter in regional and global processes, as well as the formation of appropriate state economic policy alternatives give a particular sharp emphasis to the issues of harmonization of both economic developments. The article presents harmonization issues of the development of the two Armenian economies and the respective ways are indicated as well.

Ш. Асрян

Проблемы гармоничного развития экономики РА и НКР

В то время, когда сложное политико – географическое положение, неустойчивое развитие мировой экономики бросают новые вызовы двум армянским экономикам, все приобретенное и упущенное последними в развитии региональных и мировых процессов, а также формирование соответствующей государственной экономической политики, с особой остротой подчеркивают проблему гармоничного развития экономики двух республик.

В статье представлены вопросы и соответствующие пути экономического развития двух армянских государств.

Երբ աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը, համաշխարհային տնտեսության անկայուն զարգացումները նոր մարտահրավերներ են առաջադրում հայկական երկու տնտեսություններին, տարածաշրջանային և համաշխարհային գործընթացներում վերջիններիս հաջողություններն ու բացթողումները, ինչպես նաև համապատասխան պետական տնտեսական քաղաքականության այլընտրանքների ձևավորումը առանձնակի սրությամբ են շեշտադրում երկու հանրապետությունների տնտեսությունների զարգացման ներդաշնակեցման խնդիրները:

Հոդվածում ներկայացվել են երկու հայկական պետությունների տնտեսությունների զարգացման ներդաշնակեցման խնդիրները և նախանշվել համապատասխան ուղիները:

Կապված աշխարհաքաղաքական բարդ իրավիճակի, համաշխարհային տնտեսության անկայուն զարգացումների հետ՝ նոր մարտահրավերներ են առաջադրվում հայկական երկու տնտեսություններին:

Չնայած նորանկախ երկու հայկական պետությունների միասնականացման բոլոր ջանքերին, այնուամենայնիվ, երկու հանրապետությունների տնտեսությունները գրանցում են զարգացման տարբերություններ, որն անշուշտ պայմանավորված է զարգացման տրամաբանությամբ, շարժիչ ուժերով և առանձին գործոններով: Հատկապես, երբ ակտիվ միջոցառումներ են իրականացվում ՀՀ տնտեսության ինտեգրացման գործընթացների ուղղությամբ, ինչպես ԱՊՀ, այնպես էլ Եվրամիության շրջանակներում, ՀՀ և ԼՂՀ դիրքը, տարածաշրջանային և համաշխարհային

գործընթացներում վերջիններիս հաջողություններն ու բացթողումները, ինչպես նաև համապատասխան պետական տնտեսական քաղաքականության այլընտրանքների ձևավորումը, առանձնակի սրությամբ են շեշտադրում երկու հանրապետությունների տնտեսությունների զարգացման ներդաշնակեցման խնդիրները:

Հարկ է նշել, որ տնտեսությունների բացարձակ անկախության մասին խոսք լինել չի կարող, քանի որ ՀՀ կենտրոնական բանկի կողմից, ինչպես ՀՀ, այնպես էլ ԼՂՀ տարածքում գործող բանկային միավորների գործունեության կարգավորումն ու վերահսկումը իրականացվում է միասնական տրամաբնությամբ՝ միասնական դրամավարկային քաղաքականության միջոցով: ՀՀ և ԼՂՀ տնտեսությունների զարգացումների ներդաշնակեցման ամենահաջողված բնագավառը բանկային համակարգն է: Ղարաբաղի բանկային պատմության առանձնահատկությունն այն է, որ բանկային գործունեության համակողմանիությունը ենթադրում է բանկի՝ որպես միջազգային տնտեսական հարաբերությունների լիիրավ մասնակցի կարգավիճակը, մյուս կողմից ԼՂՀ-ն չճանաչված պետություն է, հետևաբար ԼՂՀ տնտեսավարող սուբյեկտները չեն կարող հանդես գալ միջազգային տարբեր կազմակեպություններում և համակարգերում, որի պատճառով ԼՂՀ-ում բանկային սուբյեկտները հանդես են գալիս միջնորդավորված, որպես ԼՂՀ-ում գործող ՀՀ բանկեր:

Երկու տնտեսությունների զարգացման ներդաշնակեցման հարցն առաջին հերթին առնչվում է այդ տնտեսությունների զարգացման առանձնահատկությունների և ընդհանրությունների մասին պատկերացման ձևավորմանը, որի համար նախ և առաջ դիտարկենք ՀՆԱ-ի աճի և ՀՆԱ-ի կառուցվածքային համամասնությունների փոփոխությունները երկու հանրապետություններում: 2002-2013թթ. կտրվածքով ԼՂՀ տնտեսական աճի դիտարկումները ցույց են տալիս, որ այն հիմնականում երկնիշ է և միջինը կազմել է 12%: Սկսած 2011թ-ից ԼՂՀ տնտեսական աճի տեմպը բարձր է և 2013թ. այն կազմել է 9,3% : Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ տնտեսական աճը ևս բարձր էր. միջինը՝ 6,6%: Ինչպես տեսնում ենք, ԼՂՀ տնտեսական աճի միջին տեմպերը գերազանցում են ՀՀ տնտեսական աճի միջին տեմպերին:

ԼՂՀ և ՀՀ ՀՆԱ-ի փոփոխությունները (2002-2013թթ.) [1]



	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
ՀՀ տնտեսական աճը	113,2	114	110,5	113,9	113,2	113	106,9	85,9	102,2	104,7	98,8	103,2
ԼՂՀ տնտեսական աճը	111,3	120,2	118,2	114,1	110,1	108,8	114,3	113,1	105,5	109,1	109,9	109,3

Տնտեսական աճի ապահովումը բազմաթիվ երկրների տնտեսական քաղաքականության անկյունաքարն է: Սակայն այն չի կարող ինքնանպատակ լինել, դրա վերջնական եզրահանգումը պետք է լինի հասարակության բարեկեցության բարձրացումը: Հայկական երկու հանրապետություններում բնակչության բարեկեցության ներդաշնակեցման հարցերը հանգում են մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի՝ որպես տնտեսության զարգացման մակարդակը

[1] Տես՝ Հավելված 2, Հավելված 3

բնութագրող տեղեկատվական և համեմատական ցուցանիշի համահարթեցմանը: ՀՀ-ում այն 2005-2010թթ. ընթացքում աճել է չափավոր 20 %՝ ԱՊՀ, Արևելաեվրոպական և Միջին Արևելքի երկրների շարքում Հայաստանը դասելով միջին կատարողականների թվին: Տնտեսական աճի առավել բարձր տեմպերի պայմաններում ԼՂՀ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2011թ-ին կազմում էր ՀՀ համապատասխան ցուցանիշի 81%, իսկ 2013թ.՝ մոտ 80% : Հետևապես ԼՂՀ մեկ շնչին ընկնող արտադրողականությամբ դեռևս զիջում է ՀՀ համապատասխան ցուցանիշը:

Երկու տնտեսությունների տնտեսական աճի բնագավառում ունեցած ընդհանրությունն այն է, որ մինչ ճգնաժամը՝ տնտեսական աճը գլխավորապես ապահովվել է ֆինանսական միջնորդության, հանքագործության և շինարարության հաշվին, որի պայմաններում տնտեսական աճի որակական մակարդակը բարձր համարել չի կարելի, քանզի <<Տնտեսական աճի որակը բարիքների արտադրության այն մակարդակն է, որը ապահովում է հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների ներդաշնակ զարգացում՝ հիմքում ունենալով հոգևոր մշակութային արժեհամակարգ>>[1]:

Ըստ ՀՀ մրցունակության կատարողականի՝ մինչև 2009թ. տնտեսական ազրեսիվ աճը ընթանում էր տնտեսության մրցունակության անկմամբ, ինչը բնորոշվեց որպես <<աճ-մրցունակություն>> պարադոքս[2]: ՀՀ 2009թթ. տնտեսական ճգնաժամը զսպեց նախկին ագրեսիվ աճի տեմպերը, որից հետո տնտեսական անկումը վերափոխվեց աճով՝ 2013թ. կազմելով 3,2 տոկոս: Այդ առումով ԼՂՀ տնտեսության մրցունակության և աճի փոխառնչությունների մասին միջազգային կառույցների կողմից իրականացվող հետազոտություններ չկան հայտնի պատճառներով, սակայն ելնելով երկու հանրապետությունների տնտեսական աճի միևնույն շարժիչներից՝ կարելի է եզրակացնել, որ ԼՂՀ-ում ևս տնտեսական աճը չի ուղեկցվում տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացումով, որի պատճառով առանձնակի կարևորվում է թե՛ ՀՀ և թե՛ ԼՂՀ տնտեսության տնտեսական աճի ապահովման նոր ուղիների ներդրման հարցը՝ ուղղված տնտեսության մրցունակ ճյուղերի բացահայտմանը և արտահանման հատվածի զարգացմանը:

Տնտեսական աճի որակական բնութագրիչներից տնտեսության ճյուղային կառուցվածքը և տնտեսության զարգացման տեմպերը ՀՀ-ում և ԼՂՀ-ում արձանագրում են տարբեր մակարդակներ:

ՀՀ և ԼՂՀ տնտեսությունների բնորոշ կողմերից է ՀՆԱ-ի կառուցվածքում ցածր արտադրողականությամբ ոլորտների գերակայությունը, որը երկու տնտեսությունների հիմնարար թերություններից մեկն է: Այն առավել նկատելի է ԼՂՀ ենթաճյուղերի մակարդակով, որը թույլ է տալիս խոսելու ԼՂՀ տնտեսության դիվերսիֆիկացման առավել ցածր աստիճանի մասին: Կառուցվածքային բարեփոխումների մոդելում չանտեսելով տարերային ուժերի՝ ձեռնարկությունների շահույթի նորմի դերը՝ այնուամենայնիվ երկու հանրապետություններում կարևորվում է միասնական պետական լծակի կիրառումը: Այդ իմաստով արդիական են նաև հարկաբյուջետային համակարգի ներդաշնակեցման հարցերը:

Երկու հանրապետությունների վճարային հաշվեկշիռը գրանցում է էական պակասուրդ, որը տնտեսության անհավասարակշռության հիմնական հատկանիշն է: Մյուս կողմից մեկ շնչին ընկնող արտաքին առևտրաշրջանառության աճը վկայում է ԼՂՀ-ի տնտեսության գլոբալացման գործընթացներում ներգրավումը, որը սակայն, պայմանավորված արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքային տեղաշարժերում առաջադիմական միտումների բացակայությամբ և ներմուծման աճով, առաջընթաց համարել չի կարելի : Ներկայիս պայմաններում Հայաստանը <<գիտելիքի վրա հիմնված>> տնտեսության կառուցման ճանապարհին է, հետևապես բարձր տեխնոլոգիաների առկայությունը կարևորվում է ոչ միայն

[1] Տնտեսական աճի որակը, 2012-2013 թթ. ,Ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն, Երևան, Տնտեսագետ, 2014թ.:

[2] ՀՀ ազգային մրցունակության զեկույց, Երևան, ‘Տնտեսություն և արժեքներ’ հետազոտական կենտրոն, Ի-Վի Քոնսալթինգ 2012թ.:

ընդհանուր առմամբ արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում, այլև որպես ինտեգրման արդյունավետ ուղի, արտաքին առևտրաշրջանառության մեջ: Այս իմաստով ԼՂՀ-ում իրականացված քայլերը դեռևս համարժեք չեն ժամանակի հրամայականին:

Ինչպես ՀՀ-ի, այնպես էլ ԼՂՀ-ի առումով կարելի է նշել, որ նշված ժամանակաշրջանում մակրոտնտեսական ընդհանուր իրավիճակի բարելավում չի արձանագրվել, և առավել խոցելի կողմերը հանրապետություններում արտասահմանյան տրանսֆերտներից խիստ կախվածությունը, եկամուտների և սպառման միջև առկա անհավասարության զգալի մակարդակն է:

Երկու տնտեսությունների զարգացման ներդաշնակեցման հարցերը փոխառնչվում են նաև վերջիններիս միկրոտնտեսական հիմքերի հետ: ՀՀ-ում նկատվում է միկրոտնտեսական հիմքերի աստիճանական փոփոխություն: ՀՀ ընկերություններում իրականացված կառավարման վարքի ընդգրկուն հետազոտությունը բացահայտում է այս բնագավառում աշխարհի լավագույն փորձի հետ ունեցած էական տարբերությունը: Կառավարման պրակտիկայի տարբերությունը բացատրվում է կառուցվածքային գործոններով: Կառավարչական հմտությունների պակասը, անդրազգային կորպորացիաների սահմանափակ ներկայությունը համաշխարհային մակարդակում նպաստում են կառավարման բնագավառում հայկական ընկերությունների թերի կատարողականին[1] : ՀՀ-ում կառավարման համակարգի բարելավման բարենպաստ փորձի տարածումը ենթադրում է հայեցակարգային մոտեցում պետական և մասնավոր հատվածներով: ԼՂՀ-ում փոքր չափերով ընկերությունները, ընտանիքին պատկանող և ընտանիքի կողմից կառավարվող ընկերությունները մեծաթիվ են, սակայն միկրոտնտեսական հիմքերի փոփոխության փորձեր դեռևս չեն նկատվում, մինչդեռ այդ իմաստով ևս ՀՀ և ԼՂՀ ձեռնարկությունների զարգացման գործընթացը պետք է գտնվի միևնույն հարթակում:

Միջազգային պրակտիկայում արդյունավետ զբաղվածության ընդլայնման և սոցիալական ինտեգրման բարձրացման հարցերը փոխառնչվում են տնտեսությունների կառուցվածքային համամասնությունների հետ: ՀՀ տնտեսության կառուցվածքն արդեն 2005թ. գրեթե համապատասխանում էր մինչանցումային ժամանակաշրջանի կառուցվածքին, բացառությամբ զբաղվածության կառուցվածքի: ՀՀ և ԼՂՀ տնտեսական աճը գրեթե չի ուղեկցվում զբաղվածության կառուցվածքի նկատելի բարելավմամբ, քանզի երկու հանրապետություններում, առավելապես ԼՂՀ-ում բացակայում են առաջադիմական ճյուղերը, հատկապես բարձր է գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության մակարդակը: Երկու երկրներում էլ անհրաժեշտություն կա տնտեսությունը վերակողմնորոշելու դեպի վերամշակող արդյունաբերության, տուրիզմի, առաջատար տեխնոլոգիաների բնագավառ:

Հասարակության զարգացման գլխավոր ելակետը սոցիալ-տնտեսական վերարտադրական գործընթացի ինտենսիվությունն է, իսկ հասարարական զարգացումը՝ հասարակության քաղաքական, տնտեսական, սոցիալական, բարոյական շահի իրացումը: Երկու երկրներում էլ վերատրադրական գործընթացի հիմքում շարունակում են մնալ օտարերկրյա խնայողությունները, որոնց գործուն ազդեցությունը տնտեսության վրա հիմնականում ապահովվում է ՕՈւՆ-ի միջոցով՝ պայմանավորված վերջիններիս միջոցով տեղեկատվական տեխնոլոգիաների, գիտելիքի կիրառմամբ: Այն անշուշտ հանգեցնում է տնտեսության մրցունակության աճի, սակայն ԼՂՀ-ն ՕՈւՆ-ի ներգրավման խոչնդոտներով պայմանավորված, չի կարողանում ապահովել որակական տեղաշարժեր:

ԼՂՀ տնտեսական զարգացման առանձնահատկություններից մեկը ազատագրված տարածքների զարգացման ապահովումն է, որը պահանջում է հսկայածավալ ներդրումներ: Այդ առումով ԼՂՀ-ն մենակ չէ: Սակայն առկա խնդիրների ծավալի և իրականացված միջոցառումների մեջ խզումը զգալի է և խնդիրների ինքնուրույն հաղթահարման դժվարություններով պայմանավորված՝ տրամաբանական է, որ ԼՂՀ տնտեսական զարգացման

[1] ՀՀ ազգային մրցունակության զեկույց, Երևան, Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն, Ի-Վի Քոնսալթինգ, 2012թ.:

հարցերը պետք է դիտարկվեն ՀՀ տնտեսական զարգացման համատեքստում:

Ժամանակակից տնտեսությունների կարևորագույն սկզբունքներից են ազատությունը և սոցիալական հավասարությունը: Այդ իմաստով երկու երկրների սոցիալական զարգացման ներդաշնակեցումը ենթադրում է երկու հանրապետություններում սոցիալական ապահովության մակարդակների համահարթեցում՝ ընդգրկելով ազգային եկամտի վերաբաշխման, սոցիալական ապահովության, առողջապահության, կրթական, մշակութային համակարգերը: Կարելի է նշել, որ բնակչության կենսամակարդակի շերտավորման հիմնախնդիրը համընդհանուր է աշխարհի տնտեսությունների համար, տարբեր են դրանց խորության դրսևորման ձևերը: Այդ իմաստով բացառություն չեն նաև ԼՂՀ-ն և ՀՀ-ն: Էթնիկ միասնականությունը, միասնական դրամական համակարգը ապահովում են անհրաժեշտ նախադրյալներ այս բնագավառում միասնական ռազմավարության կիրառման համար, սակայն ԼՂՀ-ում և ՀՀ-ում ոչ միայն չկան միասնական մոտեցումներ, այլև ԼՂՀ-ում բացակայում են ռազմավարական համապատասխան ծրագրերը, մասնավորապես աղքատության հաղթահարման ծրագիրը, որի պայմաններում բնակչության կենսամակարդակի համահարթեցման գործընթացը մնում է համեմատաբար անկառավարելի վիճակում:

Ժամանակակից պայմաններում թե՛ ԼՂՀ-ն և թե՛ ՀՀ՝ որպես ինքնիշխան պետություններ, պետք է լուծեն գոյատևման, կայացման, զարգացման խնդիրները՝ ելնելով ազգային անվտանգության ապահովման միասնական շահերից: ԼՂՀ և ՀՀ ազգային անվտանգության տնտեսական անվտանգության ապահովման բարդությունները սկսվում են աշխարհա-քաղաքական անբարենպաստ դիրքից, իսկ ԼՂՀ-ում՝ նաև համապատասխան տնտեսական քաղաքականության բացակայությունից:Նշենք, որ ԼՂՀ-ում դեռևս ՏԱ հայեցակարգ չի ընդունվել: Հետևապես, ազգային տնտեսական անվտանգության խնդիրների հաղթահարման համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել ազգային տնտեսական շահերից բխող նպատակաուղղված և հետևողական միասնական տնտեսական քաղաքականություն, որի հիմքը և հաջողության գրավականը տնտեսության առանձին բնագավառների և ոլորտների զարգացման ծրագրերի մշակումն ու դրանք տնտեսական քաղաքականության հիմքում դնելն է, ինչն առանց համապատասխան հայեցակարգերի հնարավոր չէ իրականացնել:

Երկու հանրապետություններում տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական զարգացում-ների տարբեր մակարդակները մի կողմից օբյեկտիվ, մյուս կողմից սուբյեկտիվ գործոնների հետևանք են:

Տնտեսությունների զարգացման ժամանակակից պրակտիկայում առանձնակի կարևորվում են տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, մշակութային, հոգևոր բաղադրիչները՝ որպես նախադրյալ <<մարդկային հասարակության կայուն զարգացման>>, <<քաղաքակրթության կայուն զարգացման>>: Երկու տնտեսությունների զարգացման ներդաշնակեցման գործընթացում, կարծում ենք, այդպիսի մոտեցումը չի կարող անտեսվել: Եթե ՀՀ-ում իրակա-նցվող քայլերը ԿԶ ազգային ռազմավարության համակարգային հայեցակարգի շրջանակում են՝ պայմանավորված ԿԶ ազգային ռազմավարական ընդունված հայեցակարգով, ապա ԼՂՀ-ում ԿԶ ազգային ռազմավարության հարցերը դեռևս հստակ չեն՝ պայմանավորված ԿԶ ռազմավարական հայեցակարգի բացակայությամբ: Երկու տնտեսությունների զարգացման ներդաշնակեցման վերջնական նպատակը պետք է դառնա այնպիսի ընդհանրական տնտեսական միջավայրի ձևավորումը, որի պայմաններում առավելապես իրացվեն տնտեսության զարգացման, սոցիալական, էկոլոգիական, ժողովրդագրական, քաղաքական ազգային շահերը:

Գրականություն

1. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2007-2013թթ., Ստեփանակերտ, 2014թ. :
2. ՀՀ վիճակագրական տարեգիրք, Երևան, 2014 թ.:

3. <<ՀՀ ազգային մրցունակության զեկույց>>, Երևան, <<Տնտեսություն և արժեքներ>> հետազոտական կենտրոն, Ի-Վի Քոնսալթինգ, 2012թ.:
4. <<Տնտեսական աճի որակը>> 2012-2013 թթ. Ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն, Երևան, <<Տնտեսագետ>>, 2014թ.:
5. Գ.Ի.Վարդանյան, <<Գիտելիքահենք տնտեսություն հնարավորություն մարտահրավերներ>>, Երևան, ՀՀ ԳԱԱ <<Գիտություն>> հրատարակչություն, 2008թ:
6. Ա. Արշակյան, Ա. Արշակյան, Արդյունաբերական քաղաքականություն, Երևան, 2004թ.:
7. <<Մարդկային զարգացման հիմունքներ>> ուսումնական ձեռնարկ ուսանողների համար, գլխավոր խմբագիր՝ Հ.Լ.Սարգսյան, Երևան, <<Նոյան Տապան>>, 2004 թ.:
8. Ա. Սարգսյան, Հայաստանի հանրապետության տնտեսության կառուցվածքային բարեփոխումների կոնցեպտուալ մոտեցումները, Երևան, 2008թ.:
9. Ա. Զաքարյան, ՀՀ արդյունաբերության կառուցվածքային համակարգը և ազգային շուկայի հավասարակշռության հիմնախնդիրները, Տնտ. դոկտորի գիտակ. աստճանի հայցման ատենախ. սեղմնագիր, Երևան, 1998թ.:
12. armstat.am
13. stat-nkr.am

ԼՂՀ ՀՆԱ-ի փոփոխությունները (2002-2013թթ.)

Հավելված [1]

(տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ)

Տարիներ	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Համախառն ներքին արդյունքը շուկայական գներով	111,3	120,2	118,2	114,1	110,1	108,8	114,3	113,1	105,5	109,1	109,9	109,3
այդ թվում՝ ապրանքների արտադրություն	119,9	132,5	123,3	103,9	108,2	103,9	113,3	111,1	102,6	110,6	103,9	111,5
այդ թվում՝ արդյունաբերություն	124,4	168,8	197,8	95,7	121,0	105,8	108,1	116,6	105,0	103,9	99,1	109,0
անտառային տնտեսություն	91,4	115,5	105,9	124,4	130,7	90,3	155,4	-113,6	107,7	113,1	109,1	103,0
գյուղատնտեսություն	124,7	120,6	95,1	97,1	89,8	105,4	121,4	101,6	-115,4	127,4	124,0	109,6
շինարարություն	90,1	141,7	132,8	159,6	125,4	98,2	106,9	119,1	121,0	104,9	87,4	118,7
ծառայությունների արտադրություն	104,9	109,1	111,3	123,7	109,4	108,2	114,9	117,5	109,3	110,5	115,5	110,4
ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ	132,2	138,0	115,8	183,2	158,5	100,6	108,8	132,7	134,5	136,8	124,7	103,6
ապրանքների զուտ հարկեր			130,1	182,8	156,3	137,8	113.0	98,9	106,6	105,8	109,7	84,3
ՀՆԱ-ի ինդեքս դեֆլյատորը, %-ով			106,9	105,1	109,4	105,1	107,8	103,9	109,5	105,1	100,7	102,8

[1]Տես՝ ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008թթ. , Ստեփանակերտ, 2009թ., էջ 155,
Տես՝ ԼՂՀ վիճակագրական տարեիրք 2007-2013թթ., Ստեփանակերտ, 2014 թ., էջ157:

ԼՂՀ ՀՆԱ-ի արտադրության կառուցվածքը (2006-2013թթ.)

Հավելված2[1]

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
ՀՆԱ	100	100	100	100	100	100	100	100
	44,5	39,9	39,8	41,4	40,9	40,0	36,8	36,7
Այդ թվում՝								
Արդյունաբերություն	18,4	14,8	13,9	16,4	17,2	16,2	13,6	13,3
Անտառային տնտեսություն	0,2	0,2	0,3	0,2	0,2	0,2	0,2	0,2
Գյուղատնտեսություն	15,8	15,7	15,8	13,7	11,1	12,6	14,3	14,0
Շինարարություն	10,1	9,2	9,8	11,1	12,4	11,0	8,7	9,2
Ծառայությունների արտադրություն	51,0	54,7	54,0	54,7	55,0	57,4	61,2	62,8
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ	3,3	2,9	2,7	3,2	4,0	4,9	5,4	5,0
Ապրանքային զուտ հարկեր	7,8	9,3	8,9	8,1	8,1	7,5	7,4	5,5

ՀՀ ՀՆԱ-ի արտադրության իրական ծավալի ինդեքսները (2009-2013թթ.)

Հավելված3[2]

	2009	2010	2011	2012	2013
Ներքին արդյունք/շուկայական գներով/	85,9	102,2	104,7	107,2	103,5
Արտադրանքի հարկեր/հանած սուբսիդիաներ/	77,5	103,4	103,8	109,9	102,8
Ավելացված արժեք/ համախառն հիմնական գներով	86,9	100,3	104,8	106,8	103,6
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ	89,8	119,0	135,3	115,6	114,8
Գյուղատնտեսություն, անտառ. տնետեսություն, ձկնորսություն	105,9	84,0	114,0	109,5	107,2
Հանքագործական արդյունաբերություն, բացահանքերի շահագործում	106,3	122,8	113,9	115,7	105,9
Մշակող արդյունաբերություն	95,0	112,6	112,4	104,1	107,1
Էլեկտրականություն, գազի, գոլորշու, լավորակ օդի արտադրություն	88,0	88,7	119,5	105,9	99,4
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների	90,4	117,8	100,2	105,7	118,2

[1] Տես՝ ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2007-2013թթ. , 2014թ., Ստեփանակերտ, էջ158:
[2] Տես՝ ՀՀ վիճակագրական տարեգիրք, Երևան, 2014 թ., էջ 236 :

մշառում և կառավարում					
Շինարարություն	58,4	103,3	87,8	104,8	89,2
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմոբիլների, մոտոցիկլների նորոգում	94,7	103,4	104,8	104,7	101,0
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	71,7	113,0	104,4	109,8	93,0
Կացություն և հանրային սննդի կազմակերպում	125,5	119,6	105,3	123,6	127,8
Տեղեկատվություն և կապ	110,9	102,7	100,7	109,1	113,2
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	98,4	110,6	123,5	119,9	112,9
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	79,3	104,8	102,4	109,8	119,4
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	130,6	97,4	87,4	81,4	112,2
Վարչարարական և օժանդակ գործունեություն	104,3	102,1	108,6	98,6	73,4
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոց. ապահովագրություն	94,1	99,3	107,6	97,9	114,9
Կրթություն	102,2	104,6	103,6	100,6	100,0
Առողջություն և բնակչության սոցիալական ապահովություն	94,6	99,6	100,6	100,2	105,7
Մշակույթ, զվարճություն և այլ ծառայություններ	103,4	119,9	115,1	153,7	112,5
Սպասարկման այլ ծառայություններ	99,6	116,4	114,1	118,9	109,9
Տնային տնտեսությունների գործունեությունը որպես գործատու	113,4	106,6	168,6	86,8	107,5

Տեղեկություններ հեղինակի մասին.
Շուշանիկ Ասրյան - տ.գ.թ. ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ
E-mail : shushanik.asryan@yandex.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Մ.Մ.Մինասյանը: